Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11002/2024-ԼԱ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 14. Լոռու մարզ - 3 |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04-30.06.2024թթ. |
| Ներկայացման օր | 01.07.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Սոցիալական աշխատանքի սուպերվիզոր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 26 շահառուի Վանաձոր և Ալավերդի համայնքներում: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է 5 ուղղորդում, 6 դեպքի վարում (վերափաստագրման, անձնագրի ձեռքբերման, ընտանիքի անապահովության մասին տեղեկանքի ստացման կազմակերպում, ֆինանսական աջակցության տրամադրման կազմակերպում):
  Կարիքների վերհանման արդյունքում հոգեբանական աջակցության կարիք ունեցող 18 շահառուի հոգեբանի կողմից տրամադրվել է մասնագիտական հոգեբանական աջակցություն, որը միտված է եղել հիշողության ամրապնդմանը, ճանաչողական գործընթացների զարգացմանը պահպանմանը, ծերունական տարիքին բնորոշ առնձնահատկությունների բացահայտմանը-քննարկմանը:
  Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:
  Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է թվով 7 միջոցառում՝ Կանանց միամսյակ, Սուրբ Զատկի տոն, Հաղթանակի միջազգային օր, Առաջին Հանրապետության հիմնադրման օր, Երեխաների պաշտպանության միջազգային օր, 2 շահառուի ծննդյան օրվա նշում: Միջոցառումներին մասնակցել է թվով 8 շահառու:
- **Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայության տրամադրման** շրջանակներում աջակցություն է տրամադրվել 26 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների կոմունալ վարձավճարների իրականացման, սննդի կազմակերպման, անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, զբոսանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:
- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունայց է իրականացվել 26 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող թվով 4 շահառուի համար պետական պատվերի շրջանակներում տարբեր պոլիկլինիկաներից և բժշկական կենտրոններից ձեռք է բերվել անվճար դեղորայք: 3 շահառու ուղեկցվել է բժշկական տարբեր հաստատություններ՝ հետազոտման, ախտորոշման, բուժման նպատակով: Թվով 2 շահառուի համար կատարվել է անվճար բուժհետազոտության կազմակերպում:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- ✓ Կանանց միջազգային օր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/tkidzq),
- ✓ Սուրբ Զատկի տոն (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/wdtoby),
- ✓ Ծննդյան օրվա նշում (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/nydggj)։

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- ➢ սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- ➢ կենցաղային սպասարկում և խնամք,
- ➢ բժշկական օգնության կազմակերպում:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում Ալավերդու և Վանաձորի տնային խնամքի տրամադրման ծառայության պատասխանատուները և սոցիալական աշխատողները մասնակցել են «Առաքելություն Հայաստան» կազմակերպության կենտրոնական գրասենյակի կողմից «Դեպքի վարման մեթոդաբանություն» թեմայով Երևանում կազմակերպված վերապատրաստմանը:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 26 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 24 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 3 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 2 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 3 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 23 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա –0<br>Բ - 23 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 26 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 26 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 26 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 8 |
| 6. | խորհրդատվական օգնություն | |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) հոգեբանական խորհրդատվություն | 19 |

Կազմակերպության ղեկավար ___*Երվանդ Մխիթարյան*___ «01» 07. 2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)